


ՊԱՅՄԱՆՔ

Հարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Գաւառաց 2 Լիբրա
Էջման. Կ. Պոլսոյ 3 Մէճ.
Գաւառաց 1 Լիբրա
Օտար երկրներու 50 Ֆր.
Գանձեցման տոգը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զրէ. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼԵԱԳԵՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գաւառ գնացած յայտնայ ճանչա-
ծարքը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խմբագր-
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղաւա-
թիս Սանտրոքըլար շատակախ իւր
198, Նօրս խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յոգուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ՊՈՍԵՆՏԻՆՈՒՊՈԼԻՍ 26 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ.

Թուրքիոյ և Գարատաղի միջև կե-
ցած վէճը լուծուելու վրայ կը կար-
ծուի եթէ Սլաւոնիացիք նոր դժ-
ուարութիւններ չհանեն : Գարատա-
ղի կողմէն Պոլսոյ Բէթրօվիչ զո-
րավարը վեց վաշտ զորքով և թնդա-
նօթներով դէպ ի բլաւա և Կիւղին-
եէ կը քալէր, այս երկու գաւառակ-
ները գրաւելու համար, և Ահմէտ
Մուխթար փաշա, որ տասն և հինգ
վաշտով ճանաչ էլած էր, զանոնք Գա-
րատաղի պատուիրակին պիտի յանձ-
նէ : Սլաւոնի Ապանիացիք գումա-
րում մ'ընելով որոշած էին որ այն եր-
կու գաւառակները վերին Ալպանի-
ոյ ռազմագիտական պատուարը լի-
նելով Գարատաղի չ'յանձնուին, այլ
եթէ կարելի է՝ ուրիշ տեղով տրուի
անոնց փոխարէն, կամ գրաւական
հատուցում տան Գարատաղի : Ալ-
պանիացիք ահա թեմանց հեռագրեր
զրկած էին նաև իրենց երկրին ամ-
բողջութիւնը պաշտպանելու հա-
մար : Կ'երեկ որ Բալովայի և Կիւղին-
եէի ընակչաց մեծագոյն մասն խորամ
Սլաւոնիացիներ են, և չհասկցուի
թէ այն թերթերն, որը Հայաստանի
մէջ իսլամաց մեծամասնութիւնը
հաստատող վիճակագրութիւններ կը
հրատարակեն, ինչո՞ւ լուռ կը կե-
նան Ալպանիացոց դատը պաշտպա-
նելու համար : Արդարեւ ի՞նչ պատ-
ճառ կար որ Պէրլինի արգարադատ
վեհաժողովը Սլաւոնիական նահանգներ
տար Գարատաղի, մինչդեռ Հէրսե-
քի կողմը, բնակչաց մեծագոյն մասը
քրիստոնէայ, և որ աւելին է՝ լեզ-
ուաւ և սերունդով Գարատաղացոց
ազգակից ժողովուրդներ և նահանգ-
ներ կրնային տրուիլ : Բայց հոն Ա-
ւստրիա առիւծի բաժինը պիտի առ-
նուր և Պիսմարք իշխանը Գերմանի-
ոյ նոր դաշնակցին պատուական կար-
կանդակ մ'ընծայել ուղղելով՝ ուրիշի
ծախիւք, արժան չհամարեց անկէ
մեծ մաս մը կարել յօգուտ Գարա-
տաղի, այլ Ալպանիական դաշնագը-
րին Հէրսեքէն Գարատաղի նուիրած
տեղերը նուազեցնելով՝ հարաւային
կողմէ Գարատաղի սահմանն ընդլայ-
նեց, Ալպանիայէն աւելի հոգ տա-
լով, առանց բնակչաց ազգութեանը
կրօնքին և դժայմանն ուշ գնելու :
Ահա այսպէս վեհաժողովին որոշմամբ
Գարատաղ իրաւունք ստացաւ Կիւ-
ղինիէն և Բալովայի վրայ, և Ալպա-
նիացոց բողոքները, սրտմտութիւ-
նըն ու դիմադրութիւնն արգիւնք
չեն ունենար բնաւ : Գարատաղ պի-
տի առնու այն երկու գաւառակներն,

և միանգամ ևս պիտի հաստատուի թէ
իրաւունքը սուրին ծայրն է, քանզի
Ալաւան իշխանը կ'ողառնայ որ
եթէ անոնք իրեն չ'յանձնուին, զի-
նու զօրութեամբ պիտի գրաւէ, ու-
րոյ համար ալ զօրք և թնդանօթ
պատրաստուած է սահմանադրուիլ :
Հետեւաբար, մինչդեռ Հիւլենական
խնդիրը տակաւին առկալ է և պատ-
ուիրակաց Ալպաքեմական վիճարա-
նութիւնները դեռ չեն վերջացած
հանրածանօթ թ. Գ. ատենագրութեան
դժին վրայ, Գարատաղացոց սուրը
Կիւղինեէի խնդիրն անմիջապէս պի-
տի լուծէ :

Ռուսիոյ կայսրն ողջամբ Բեդըր-
պուրի հասաւ, ուր դիւանագիտաց
խորհուրդ մը պիտի գումարուէր, և
կըսուէր թէ հոն ջարին հրաժարման
խնդիրը պիտի որոշի : Ստոյգ է սա-
կայն որ այս խորհուրդը քաղաքա-
կան կարեւոր վիճաքանութիւններ
պիտի ընէ և հաւանական է որ Ռու-
սիոյ կառավարութեան բարձրագոյն
ընթացակարգներուն մէջ փոփոխութիւնք
լինին : Կորչաքով իշխանին անկումը
գուցէ իրանայ, և դիւանագիտաց
նեստորը քաշուի այն ասպարէզէն,
ուր քառորդ դարէն աւելի Եւրոպա
վարժուած էր զայն տեսնելու և նո-
րա ճարտարահիւս 2 շրջաբերականն
ընէ ու ծանուցադրեր կարգալու-
որովք առեւելոյ Սիւրեւեան Բեր-
րիտանիայի դատը կը պաշտպանէր,
բայց իրօք Սլաւաց միութիւնը կը
պատրաստէր և Ռուսիոյ ապագայ
դաշնակիցներ ու արբանեակներ կը
հասցնէր : Թէև Պոսնիա և Հէրսեք
երեք դաշնակցաց միոյն բաժին ին-
կան, բայց գոն Պոսնիայի կաղ-
մակերպեցաւ և Սլաւ իշխանութ-
եանց հետ յարաբերութեան սկսաւ :
Պոսնիայի իշխանին դեպքան Օլովի-
էյ հաղարարեալ Գարատաղի իշխա-
նին ինքնադիւր նամակ մը մատուց,
իւր «օգոստափառ» վեհապետին» կող-
մէն : Պալքանի իշխանութեանց դաշ-
նակցութիւնն հորիզոնին վրայ միա-
գոյն կերպիւ գծուիլ կ'սկսի : Թէպէտ
և Արեւելեան Բուլղարի բաժնուեցաւ
Պոսնիայից, սակայն Պոսնիայը կը
ջանան բարոյական միութիւնը պահել
և կըսուի թէ Արեւելեան Բուլղարի
ընդհանուր ժողովոյ ատենագրութեան
Պոսնիայի իշխանին կողմէ նախա-
բարական պաշտօնի պիտի կոչուի :
Կորչաքով իշխանը կրնայ իւր հրաժեշ-
տին մէջ Պալքանի կողմն անկարելի
նետելով միութեամբ թէ բաւական
բեղմնաւոր ասպարէզ մ'ունեցած է,
և թողու իւր յաջորդին որ շարու-
նակէ մեծն Պետրոսի կտակին գոր-
ծադրութիւնը :

ԿՈՊՈՅՏ ՏԵՏՐԱԿ

Կապոյտ տետրակին պարունա-
կած ամենակարեւոր նիւթերէն մին
ալ անտարակոյս այն գրութիւններն
են, որք անցեալ տարւոյն օգոստոս
ամսէն իշխու Օսմանեան Ասիոյ վի-
ճակին և բարենորոգմանց խնդրոյն
վրայ Անգլիական կառավարութեան
և Բ. Գրան միջև եղած բանակցու-
թեանց կը վերաբերին : Ընդհանուր
տեսութեամբ պէտք է ըսել թէ
անցեալ տարւոյն օգոստոս ամսէն ըս-
կըսեալ, երբ բարենորոգմանց նը-
կատմամբ Անգլո—Ռուսքական հըռ-
չակաւոր բանակցութիւններն ե-
ղան, մինչև Կապոյտ տետրակին վեր-
ջին թուականն, — Օգոստ. 6. — Անգ-
լիական դեսպանատունն այս խնդ-
րոյն վրայ որ և է պաշտօնական ծա-
նուցադիր չէ ներկայած Բ. Գրան,
և որ աւելին է՝ մինչև վերջն յոյժ մեղ-
մութեամբ վարուած է : Սըր Հ. Լէ-
յարտի մերթ ընդ մերթ Բ. Գրան զըր-
կած գրութիւնները մեծ փառահաւան
մը կը շնչեն, փառահաւան Բ. Գրան
անկեղծ դիտարկութեանց վրայ,
տահալութիւն բարենորոգմանց վրայ,
փառահաւան Բ. Գրանի յաջողու-
թեան վրայ և այլն : Բայտնի է սա-
կայն որ այս տարուան հոկտի վերջե-
րն Անգլիական դեսպանին իւրեզուն
յանկարծ փոխած է Բ. Գրան մօտ,
և մինչև մէկ աստիճան սղդու ըն-
թացք մը բռնած է, որուն հետ կըն-
թանան նաև Անգլիական նաւատոր-
մին հռչակաւոր շարժումներն : Աւե-
լորդէ է ըսել թէ ներկայ Կապոյտ
տետրակը բարենորոգմանց խնդրոյն
նկատմամբ եղած բանակցութեանց
այդ վերջին դէպքը պարունակէր :
Անք թուականին կարգաւ կը յի-
շատակեմք նոյն խնդրոյն նկատմամբ
ներկայ Կապոյտ տետրակին պարու-
նակած գրութիւնները :

Թիւ 45

1879 յունիս 12ին Սըր Հ. Լէյարտ
Պ. Թրօթթընէն և ուրիշ արժանա-
հատ անձերէ առած տեղեկագը-
րերուն և Հայոց Պատրիարքին դի-
տողութեանց վրայ, դեսպանատան
քաղաքական թարգման Սըր Ալֆրէտ
Սանտլիոնին միջոցաւ Հայաստանի և
Արեւելեան Անատոլիոյ վիճակին նը-
կատմամբ Բ. Գրան ուղարկութիւնն
հրաւիրած է, ազգարարելով որ ե-
թէ գործոց արդի վիճակը շարունա-
կի, Հայկական խնդիրն ալ Պոսնի-
ական խնդրոյ մը կերպարանք պի-
տի առնու : Սըր Հ. Լէյարտ իւր այս
ձեռնարկը Լորտ Սալիսպրիի իմացու-
ցած է, բայց որովհետեւ թէ՛ Սըր
Սանտլիոնին հրահանգներն և թէ՛
Լորտ Սալիսպրիի դիմումը գըրու-
թիւնն արդէն թարգմանած եմք, հոս
պարզ յիշատակութիւն մը բաւական
կը համարեմք :

Թիւ 50

Այս առթիւ Լորտ Սալիսպրիի հե-
տեւալ գրութիւնը կը զրկէ Սըր Հ.
Լէյարտի :

«Արտաքին գործոց պաշտօնատուն,
26 յունիս 1879

«Սըր .

«Ստացայ և թագուհւոյն ներ-
կայեցի Ձեր վսեմութեան յունիս 12
թուով (վերջինիցայ) գրութիւնն, որ
Ասիական Թուրքիոյ Արեւելեան գա-
ւառաց մէջ բարենորոգման անմիջա-
կան միջոցներ ձեռք առնուլու սախ-
պողական հարկը Թուրք կառավա-
րութեան իմացնելու համար ձեր ը-
րած ձեռնարկները կը ծանուցանէ :

«Այս նիւթին վրայ Ձեր առ Բ.
Գրանն ուղղած դիտողութիւնները
վեհ. թագուհւոյն կառավարութեան
կատարեալ հաւանութիւնն ստացած
են : »

ՍԱԼԻՍՊՐԻ

Թիւ 54

1879 յունիս 23ին Սըր Հ. Լէյարտ
Լորտ Սալիսպրիի ուղղեալ մէկ գրու-
թեանը մէջ, որոյ մէկ մասը միայն
հրատարակուած է Կապոյտ տետրա-
կին մէջ, կը ծանուցանէ թէ Ասիա-
կան Թուրքիոյ բարենորոգմանց վրայ
շարունակ պնդած է խայրեալուն փա-
շտի և Գարա թէոտորի փաշայի մօտ :
Անգլիական դեսպանին այս գրու-
թիւնն ալ սակէ առաջ թարգմանած
եմք :

Թիւ 59

Այս առթիւ ևս Լորտ Սալիսպրի-
ի հետեւալ գրութիւնը կը զրկէ Սըր
Հ. Լէյարտի :

«Արտաքին գործոց պաշտօնատուն,
40 յունիս, 79

«Սըր .

«Օսմանեան տետրութեան Ասիա-
կան գաւառաց մէջ Գրան խոստա-
ցած բարենորոգմանց և ոչ մին չը
գործադրուելով ցոյց տրուած յա-
պաղումն այնպիսի բան մ'է, որ մեծ
ցաւ կը պատճառէ վեհ. թագուհւոյն
կառավարութեան, և կուղիւմ յայ-
տարարել Ձեր վսեմութեան թէ Անգ-
լիական կառավարութիւնը կատա-
րելապէս հաւանութիւն կուտայ այն
ձեռնարկներուն, զոր, ինչպէս ձեր
յունիս 23ի գրութեան մէջ կը յայտ-
նէք, ըրած էք Սուլթանին նախարա-
րաց ուղարկութիւնն հրաւիրելու հա-
մար՝ այս մասին իրենց պարտակա-
նութիւնները զանց ընելու վրայ :

ՍԱԼԻՍՊՐԻ

ՀՆՈՍԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բեղրոպոլի 3 դեկտ.
Վարչաւոր կառավարելու ժամանակէ
մը ի վեր մեծ մեղմութեամբ կը փարուի
Լեհացի ժողովրդեան հետ : Այս մեղ-
մութիւնը Լեհացոց սիրտը գրաւելու

րաման եկաւ, որ ըստ նոր օրինաց՝ Պիտայէթի ժողովոյն երկու հոգի անդամ ընտրուին վեց ընտրելեաց մէջէն, որոնցմէ մինն քրիստոնեայ պիտի լինէր տեղիս Հայ, Յոյն և Հրէայ հասարակութեանց կողմանէ, իւր իրենց ներկայիչ, և միւսն Մահմետական: Ընտրող գլխաւոր ազգայինք ժողով մը կազմելով՝ քուէարկութեան թղթերն գիւղերու և այլ պէտք եղած պաշտօնէից զբոսեցան, քուէարկութեան կատարուեցաւ և քուէից բացարձակ առաւելութեամբ քրիստոնեայ հասարակութեանց կողմանէ ընտրուեցաւ մեր ազգայիններէն Չարարիա Եփէնտի փափազեան հրմուտ և ազգասէր անձն:

Երբ գիւղիս բոլոր ազգայնացիք խաւորքի ժողով գումարեցան, որպէս զի քուէարկութեան արդիւնքն գրեն ի Զաթալճա ի վաւերացումն ընտրեալ պաշտօնէից, որոնց համար հրաման գտով նոյն տեղէն իւրեանց պաշտօնն սկսին: Երբ հանրագործը կատարագրէին, Յունաց Տեսպօզն յայտնապէս նախանձեղով առ այս ընտրութիւնը, ուզեց եղած օրինաւոր ընտրութիւն մը քակել և նորի մը ձեւնարկել որ թերեւ այս անգամին զօրաւոր մեքենայք դարձնենք ի յաջողութիւն Պիտայէթի ժողովոյ անդամակցութեան սոյն պաշտօնը Յոյնի մը տալ: Այս մասին Տեսպօզն իրեն կողմնակից ունէր տեղացի Մալմիւտիւրի՝ Շէրիֆ Էփէնտին, որ Յունաց Խոյեան հանդիսացաւ ժողովոյն մէջ (անշուշտ դրամ ուտելու ակնկալութեամբ): Յոյնք արդէն իտարէի ժողովը մարդ ունին, մինչդեռ Հայք չունին: Յունաց նըպատակն է Պիտայէթի մէջ ալ անդամ ունենալ, որով տեղիս կառավարութեան չըմանակին մէջ մեծ տեղ գրուեալով ուղած գերերկին խաղալ ի պահանջել հարկին: Ահա այս գիտաւորութեամբ 2-3 օր հանրագործը ստորագրել չուզեցին, մինչդեռ գայմագամն, դատաւորն և ի մեր լայնոց աթոռակալ Տ. Խորէն առաք. քահանայն ստորագրած էին: մեր քահանային կողմնակից կը գտնուէին առաջին երկու արդարասէր պաշտօնեայքն: Յոյնք այլ և այլ պատճառանք և դժուարութիւնք հանեցին ըսելով թէ «ի գիւղս զբոսեցան պաշտօնական ազգազրեքն Տաճկերէն լեզուա գրուած լինելով՝ գիւղացիք չեն կրցեր հասկնալ նոցա իմաստը, ասոր համար Հայոց չափեցաւ և թէ գործոյն մէջ ֆէալ ալ կերէի» ևս ևս:

Տեսպօզն սա մասնաւոր նպատակն ալ ունէր, այսինքն Յունական լեզուն պաշտօնական լեզու ընել տալով զուգընթացել Տաճկականին հետ:

Վերջապէս գայմագամն, դատաւորն և մեր քահանայն իւրեանց ըստորագրութեամբ ընդունեցին քուէարկութեան օրինաւորութիւնը սոսոյց գիտնալով հանդերձ թէ ընտրեալ Հայն արժանաւորագոյն է իւր հմտութեամբն և վկայեալ բարեմասնութեամբը:

Յետոյ ֆէալ բառին անտեղի գործածութեան համար բողոքադիր մը պատրաստել սկսան ընդդէմ Տեսպօզնին և իրեն կուսակից Շէրիֆ Էփէնտին, որոնք տեսնալով թէ գործը գէշ կերպարանք պիտի առնու, զըջում յայտնեցին, որոյ համար պահ մ'առաջ ստորագրած բողոքադիրը պատուեցին և նոր օրինաւոր հանրագործ մը ստորագրեցին եղած ընտրական գործողութեան ճիշդ համաձայն: Յունաց Տեսպօզն ի հարկէ ստիպեալ հանրագործը ըստորագրեց, բայց չի մոռնում ըսել:

Իսկ, որ իւր յունական խորամանկութիւնը դարձեալ յայտնեց իւր ստորագրութեան բողոքադիր սա կատարած տողն առեցնելով թէ՝ «սխալ հասկցում են պաշտօնական ազգազրեքն»: Շէրիֆ Էփէնտին հետ խորհրդակցութեամբ դադարի նամակներ ալ զրկեց ի Զաթալճա, ուր պաշտօնէից գրեթէ ամենքն ալ Յոյն են:

Յաւ և զարմանք ամենուս միտք պաշարեց, երբ նոյն տեղէն հրաման եկաւ թէ «Բողոքանալն անուշ Յոյնը Պիտայէթի ժողովոյն անդամ ընտրուեցաւ», Հայերն առ այս մի ժողով կազմեցին և հետեւեալ բողոքագրոյն Տաճկերէն պատճէնը պատգամաւորի մը միջոցաւ զրկեցին առ Դայմագամն:

Նոյ. 4

«Վսեմափայլ գայմագամ պէյ»
«Օրինաւոր եղանակաւ քուէից բացարձակ առաւելութեամբ Պիտայէթի ժողովոյն անդամ ընտրեալ և Ձեր վսեմութեան ու տեղիս բոլոր ազգայնացիք գլխաւորաց ստորագրութեամբն իսկ վաւերացեալ Չարարիա Էփ. փափազեանի աթոռը ցաւօք սրտի կը տեսնեմք Յոյնի մը բազմիւր, որ էն յետինն էր քուէ ընդունող ընտրելիներուն մէջ:

«Ուստի յանուն Սիւրիքի Հայոց ներկայիս կը խնդրեմք, որ բարեհաճիք պատգամաւոր գրաբերիս յանձնել ձեր կտրուէն և վերջական պատասխանն, քանզի սոյն խնդրոյն մէջ կամ մի գաղտնիք դարձած է և կամ ի Զաթալճա զրկուած պաշտօնական հանրագործն այլափոխուած է, որոյ համար ազգովին մինչև յետին շունչ պիտի բողոքեմք, որ մեր արդար իրաւունքն է. երբեք չեմք կրնար անտարբեր կենալ ոչն խնդրոյն վերայ, երբ կը տեսնեմք որ հակառակ մեր բարեխնամ կայսեր կամաց, իւր նոր և բարեշունք բարեհաճութեանց մէջ նորանոր զեղծումներ կատարուին ումանց կողմանէ:»

Սոյն բողոքագրոյն պատասխանին թարգմանութիւնը հոս կը տեսնեմք, որոյ ընդգրկն ի Պատրիարքարան գրուեցաւ:

«Երբդի տէր (առ Տէր Խ. Գահանայն) «Սիւրիքի Պիտայէթի ժողովոյն անդամ» ընտրեալ Հայ ազգէն Չարարիա Էփէնտի փափազեանը քուէից բացարձակ առաւելութիւնը վստակած ըլլալով՝ յիշեալ անձին տեղ էն յետին քուէ վստակող յոյնի մը տրուելուն պատճառը կը հարցանէք ինչ Զեր նոյ. 4 թուականաւ գրած նամակաւն՝ զոր ընդունեցայ, սոյն պատասխանագրիս իմ կողմանէ գրեղ կապահովեմք որ հանրագործն ոչ փոխուած է և ոչ ալ գաղտնիք մը դարձած է, ոյլ մեր ստորագրութեամբ զրկուածն է:

«Ուստի անդամաց քուէներու առաւելութիւն կամ անձանց արժանիք սրտելու արտօնութիւնն Միւթէտարքին վերաբերեալ է և ոչ Դայմագամին, որ Միւթէտարքի հրամանին գործադիր պաշտօնեայն է:»

Ստուգելու մենք կը հաւատամք Դայմագամի անկեղծութեանն և ինչպէս որ իւր գրուածէն յայտնի է, ինքն կը ջանայ միմիայն իւր անաչառութիւնը պաշտպանել, տեղի ունեցած տարօրինակութիւնը ձգելով անոնց՝ որոնց որ անկ է:

Պիտայէթի ժողովոյն մէջ այժմեան աթոռ ունեցող Յոյն վեց ընտրելեաց մէջ էն նուազ քուէ շահողն ըլլալով՝ իւր անունն Տաճկական մը հետ արդէն նոյն հանրագործութեան մէջէն ջնջուած էր ըստ թուանոյ վկայութիւնի կանոնադրութեան

(նկատմամբ) Դէրոք Եղեւածին, որ կը տրամադրէ թէ «ընտրելոց երրորդ մասն, որ նուազ քուէ վստակողն է, պիտի ջնջուի, և մնացեալ երկու մասն իրենց շահած քուէներովն հանդերձ լիւրջից զրկուելու է և լիւրջն ողորդ շահած քուէից թիւը և անձնական արժանիքն ի նկատ առնելով կ'որոշէ և կը վաւերացնէ անոնցմէ մի մասն»:

Ի վերջոյ լիւրջն և կրկին կը խնդրեմք պատկաւելի ժողովէք, որ ինչքան ազգու միջոցներով պէտք եղածը գործադրել, քանզի այս խնդիրն մահու և կենաց խնդիր մի է տեղիս Հայոց համար, եթէ յիշուի Յունական խորամանկութեան զոհ երթայ Հայոց սոյն արդար իրաւունքն, այլ ևս տեղիս Հայերն իւրեանց նշանակութիւնը իսպառ կորուսած կը լինին:

Ի եմք վստահութեամբ, որ եթէ զմեզ որք չի ձգելով Ձեր կողմանէ զօրաւոր անկեղծութիւնք լինին, տնտես պիտի յաջողին պաշտօնանկ ընել տալ վերոյիշեալ Յոյնն, և նորա տեղ նստեցնել փափազեան Էփէնտին, որ իւր աշխոյժ գործունէութեամբն և հմտութեամբը ոչ միայն մեր ամենուս՝ այլ նաև բազմաթիւ Յունաց համակրութիւն զբաւած է, որոնք իրեն համար, սրտի հաճութեամբ, կարկտի նման քուէներ տեղացին. այժմեան մեքենայութեանց հեղինակներն մի քանի Յոյն անձինք են, որք տեղիս մեր կարեւորութիւնը բողոքովն կորսնցնել տալու ճիգ մ'ունին, սա կայն բնաւ չպիտի հասնին իրենց անմիտ նպատակին, զի մենք զօրաւոր փաստ և իրաւունք ունեմք ի ձեռին, ընդ որս և պատրաստ եմք մեռնել ի պահանջել հարկին:»

Վստահ Ձեր ազգապիտուութեան վերայ կը խնդրեմք պատուական Մատիսիւք մերձակայ թիւերէն միոյն մէջ հիւրընկալել, որով

Մնամք Ձեզ նորհապառտ փոխ առննադպիր Ատենապետ Օհան Թաթեռն:

Կ. Պոլիս 25 հոկտ. 1879
... Խմբագիր Տնօրէն Մատիս օրագրոյ:

Դպրոցատիրաց-Արեւելեան ընկերութեան Տնօրէն խորհուրդս կը խնդրէ Ձեր Մեծապատուութեանն որ բարեհաճիք Ձեր պատուական թերթին միջոցաւ հրատարակել, ի գիտութիւն Մեծարդոյ ազգայնաց և անդամաց, ընկերութեանս վերջին եռամսեայ շրջանի հասուելից և ծախուց հաշուեցուցակը զոր կ'ուղարկեմք Ձեզ ընդ գրոյն:

Մատուցանելով, Ձեզ, կանխաւ մեր խորին նորհակալիքը:

Մնամք յարգանք
Վ. Ատենադպիր Ատենապետ
Կ. Սէլեւան Ս. Տաթեռն

ՀԱՍՈՑԹՔ ԵՒ ԾԱԽՔ
ԴՊՐՈՑԱՍԻՐԱՅ—ԱՐԵՎԵԼԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1879 ՏԱՐԻՈՑ
ԵՐՐՈՐԻ ԵՒ ԱՄՍԵԱՅ ՇՐՁԱՆԻ
(Թուլիս 15 ցվերջ Սեպտեմբերի)

ՊԱՐՏՔ
1879 տարւոյ երկրորդ եռամսեայ ընթացքին հասուելից առաւելութիւնք
Դահեկան Ոսկի 92222 50
Ամսական ընկերաց որք ի Պոլիս 4474 4205

Ամսական ընկերաց որք ի Ռոստոյ	560	338
Նուէր հաւաքեալի Պոլիս	106	25
» » Բեդ		
Բարեգործական ընկերութեան անդամ իւր անուամբ բացուելիք վարձարանի համար	6859	»
Նուիրեալ գրեանք	7000	»
	5098	»
ԳՆԿ. ՈՍԿԻ	115806	75

Վարձարան ի Մուշ	1059	25
» Վաղարշա.	1605	25
» Բաղէշ	1165	50
» Բարեգործական ընկերութեան ի Լիզ գիւղ	1202	50
Մ. Սարգեան Տեսուչ վարձարանաց	1042	25

Պատուիրակ ի Կովկաս	6072	75
	6652	

ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԾԱԽՔ	
Ամսական Գրագրի, Հաւաքչի Օտապալի յուլիս օգոստ. և սեպտ. ամսաց	1505 30
Սենեկի վարձք մայիսէ ցվերջ հոկ. 6 ամսական	600
Տպագրական ծախք	1860
Թղթ տարութեանց	415 50
Թղթ եղէնք	108 50
Չանագանք	118

	4607	80
Կարասիք	245	»

	17377	25
Կլու. առաւելութիւն հասուելից	98229	50

ԳՆԿ. ՈՍԿԻ	115806	75
Կ. Պոլիս Վ. Ատենապետ		
18 հոկտ. 1879		
Գանձապետ	Համարակալ	
Կ. Սէլեւան	Գ. Շէրեռն	

ԾԱԽՈՒՑՈՒՄ	
Ս. Երուսաղէմայ վաղարձակ իւսկիւտար վանքին այգին Գապրիստան ճատտէսի 11 թիւ միայն մեծ տունը որ 330 կանգուն տեղի է վաղարձակ կողմանէ ծախուէ, ուստի ա՛վ որ կուզէ՝ մինչև յառաջիկայ հինգ շաբաթի օր պէտք է յերուսաղէմայ տուն գալ:	22 նոյ 1879
	2—4

Ի Լ Ա Ն
Լտիրնէ սէյյաւր գօլ օրատոյի Հիւմայունը մերքեզ վէ մէվզընտէ պուլունան ասաքըրի Շահանէ իշին շուրութը մուգարբէթսիյլէ միւպայեա օրուսաղայը Էվլէրէ իւրն գըլընան էրգաքըն իճրա խալիքն միւնաւ քառասունտ բիրինճին պէհէր գըլէսի երեզ երկրմի պէշ պուշուդ վէ բուղանը սասէնին պէհէր գըլէսի պէշ երեզ ալմմըշ վէ սօղանըն պէհէր գըլէսի ալմմըշ վէ թուղուն պէհէր գըլէսի գըրգ ատօրթ վէ կաղըն պէհէր գըլէսի երեզ էլլի սէքիզ վէ ֆասուլիանը պէհէր գըլէսի երեզ երկրմի սէքիզ բարայա մահայի թալիպի Էօհ տէսինտէ գալմըշ վէ իշ պուլ թըշընի սանիլի բուլմինն երկրմի ալմմընը բաղար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վերլմմիսի մուգարբէր պուլունանը օրմաղէ իթալէ թալիպ օրմաղըն եհվի մէզքիւրտէ Տարի Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի:

28 թըշընի սանի 1879

Պապը Սէրասքէր

ԲՈՍԺՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

յոս :	Է-բ-դ-ա-լ-ու ի շէր :	թի-
2	Եկեմհաննէս Մէղար, Պէյլը, Թար, Եկեմ, Սթէն. 33 Էմիրի, Պոյաւ. Բ Հասար, Պէյլը, Արեւելում գիշեր չող համարին հետ պիտի հաղորդակցի (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
2 45	Եկեմհաննէս Մէղար, Պէյլը, Թար, Եկեմ, Էմիր, 34 Բ Հասար Պէյլը (նոյ 15 էն քառորդ մը ետքը)	
3 15	Բ Ա. Գալպագէն Եկեմհաննէս Մէղ, Պէյլը, Թար, Եկ- 18 եմ, Սթէն, Էմիրի, Յոսէփ. Բ Հասար, Պէյլը. (նոյ 15 էն քառորդ մը ետքը)	
4 15	Ա. Բ. Գալպագէն Եկեմ, Մէղար, Պէյլը, Թար, Եկեմ, Էմիր, 32 Բ Հասար, Պէյլը. Արեւելում, Օրթաք, պէշիկի : (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
4 45	Եկեմհաննէս Մէղար, Պէյլը, Թար, Եկեմ, Էմիր, 24 Եկեմ, Էմիրի, Բ Հասար, Պէյլը. Արեւելում, Գու- րուգ, Օրթաք Պէշիկի.	
7	Եկեմ, Պէյլը, Թար, պէշիկ, Եկեմ, Էմիրի, 5 Գաննէս Բ Հասար, Գաննէսի, Արեւ, Չէնի, Պէյլ, Օրթ, Գուրուգ, Պէշիկ, Լապիլատար :	
8	Ա. Է. Բ. Գալպագէն Եկեմհաննէս Մէղ, Պէյլը, Թար, 34 Պէշիկ, Եկեմ, Էմիրի, Պոյաւ. Բ Հասար, Պէյլը, Արեւ, Գուր, Օրթաք, Պէշիկ:	
10	Մէղարպուրուգէն Պէյլը, Թար, Եկեմ, Էմիր, 22 Էմիրի, Բ Հասար, Արեւ, Օրթաք, Պէշիկի :	
Արեւելում գիշեր :		
2 15	Արեւ, Գուր, Օրթաք, Պէշիկ : 19 (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
2 45	Արեւ, Պէշիկ, Գալպագէն, Օրթաք, Պէշիկ, Գալպագէն : 25 (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
3 15	Պէյլը, Արեւ, Գուրուգ, Օրթաք, Պէշիկ, Գալպագէն : 22 (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
4	Արեւ, Գուր, Օրթաք, Պէշիկ, 19 (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
4 45	Արեւ, Գուրուգ, Օրթաք, Պէշիկ, Գալպագէն : (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
10 45	Գուրուգ, ազգական կամուրջ : 25	
Արեւելում Է-բ-դ-ա-լ-ու ի շէր :		
2	Պէշիկ, Բալայ, Բ. Փաշա, մահ, Գաննէս, Ա. Հի- 24 սար, Գաննէսի, վանիք, Չէնիկի, Պէյլ, Գուրուգ (նոյ 15 էն մէկ քառորդ ետքը)	
2 15	Արեւ, վանիք, Չէնիկ, Պէյլ, Գուրուգ, Գալպագէն : 25	

2 45 Պէտրէմար, Թար, Պէթթօղ, Բաշար, Գանկ, Ա. Հիսար, 17
Գանատ, Վանկը, Զէնկէ, Պէյլը, Գաղկ,
(Ուրբ, օրերը 3 քանորդ անցած)
(Եւ 15 էն մէկ քանորդ ետքը)

3 45 Պէտրէմար, Թար, Պէթթօղ, Բաշար, Գանկ, Ա. Հիսար, 28
Գանատ, Վանկը 2, 3, 4, 5, 6, 7, Գաղկ, Գաղարժաւ :
(Եւ 15 էն մէկ քանորդ ետքը)
(Եւրարժ օրերէն ի գոտ)

8 45 Պէտրէմար, Պէթթօղ, Բաշար, Գանկըճա, Ա. Հիսար, 49
Գանատ, Վանկը Զէնկէ, Պէյլը, Գաղկ, Խանկ,
(Ուրարժ օրերը ընթացի փաշա մահալլսի):

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳՆԱՆԻԵՐԸ

Չափ	Եւրոպական	Եղեբե	Յոս
3 30	Գառու, իսկ, Պէշիկ, Գառու, Օրթ, Պէշ, Ձէնի, Արնի, Գանտ, Ա. Լ. Բ. Հիսար, Գանի, Էմիրիկէն, Եշիկը, Պէշքօշ, Թարառ, Պէշիկը, Եշիկման:		5
4	Պէշիկ, Օրթաք, Արնաւ, Պէշիկը, Բ. Հիսար, Էմիրիկ, Եշիկը, Թար, Պէշիկը, Եշիկման		24
5 15	Գառու, Պէշիկ, Օրթաք, Արնի, Պէշիկը, Բ. Հիսար, Պոյաւ, Էմիրիկ, Եշիկը, Պէշքօշ, Թար, Պէշիկը, Մէզար, Եշիկմ, Գաւառ:		34
6 45	Իսկ, Պէշիկ, Գառու, Օրթաք, Պէշ, Ձէնի, Արնաւ, Գանտ, Բ. Հիսար, Պոյաւ, Եշիկը, Թար, Պէշիկը:		19
8	Պէշիկ, Օրթաք, Արնաւ, Պէշիկը, Բ. Հիսար, Էմիրիկ, Եշիկը, Թարառ, Պէշիկը, Մէզարաւ, Մէզարաւ:		22
9 30	Պէշիկ, Օրթաք, Արնաւ, Պէշիկը, Բ. Հիսար, Էմիրիկ, Եշիկը, Թարառ, Պէշիկը, Մէզար, Եշիկմ (աւրաթ օրերէն ի զաւ)		47
10 15	Արնաւ, Պէշիկը, Բ. Հիսար, Պոյաւ, Էմիրիկ, Եշիկը, Թարառ, Պէշիկը, Մէզար, Եշիկման:		32
	(աւրաթ օրերը ժամը 10 ին)		
10 40	Պէշիկ, Օրթաք, Արնաւ, Պէշիկը, Բ. Հիսար, Էմիրիկ, Մէշիկ, Եշիկը, Թարառ, Պէշիկը, Մէզար, Եշիկմ:		48
11 45	Բ. Հիսար, Պոյաւ, Էմիրիկ, Մէշիկ, Եշիկը, Թարառ, Պէշիկը, Մէզար, Եշիկման:		34
	(Հարաւային օրերուն Սթէնիս Հահուպըր)		

U^r = 2000 467

4	15	Աղապարհ Արնապուտաքէ ղոյ:	22
10	15	Գապու, Պէշիկի, Օրթաք, Գուր, (սուրբաթ օրերը ժամը (Օրին)	25
14	15	Գապու, Պէշիկի, Օրթաք, Գուրուշ, Արնապ, Պէպէք	19
14	35	Պէշիկիթաշ, Օրթաք, Գուրուշ, Արնապ:	23
42		Պէշիկիթաշ, Օրթաք, Գուրուշ, Արնապուտա, Պէպէք:	22

Умъ мѣмъ тѣмъ

3 20 իւսկ. դուշ. Պէյլ. Զէնկ. Սրնաւ.
(նոյ. 145 ին ժամը 3 30ին պիտի ելլայ)

9 45 Գուզկ. Պէյլէրպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար,
Գանի. Բաշապ. Պէյքօղ. Մէշաբպ. Բ. Է Ա. Գալաթ :

10 30 Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլլի. Ա.
Հիս. Գանի. Զուպուզ. Բաշ. Պէյքօղ. Թրպ. Պէյպիւք :

11 15 Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Ա. Հիսար, Գանի.
Բաշապ. Պէյքօղ :

11 30 Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Սրնաւ.
4 (Ուրբաթ օրերը շողենաւ մը կամարընէն ելլաւով
իւսկ. Գուզկ. Պէյլէր, Զէնիկէն Վանիք. Գանտ.
Ա. Հիսար, Գանի. Բ. Թ. մահ, Բաշապ. ու Պէյքօղ,
ժամը 5 30ին Պէյքօղէն նոյն նաւամարտիցները
Հանտիլլայով կամարը պիտի իջնայ)



ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Պորք ականձերո կաշուած ձեռ-
քով դարձող ու անքակ կար կարող
դործիքը ամեն տեսակ կար մեծ դիւ-
րութեամբ կը կարէ ու քինն այ տ-
ժանէ, երաշխաւորութեամբ կը աղը-
ւի, աւրուորածները կը շտկուի ու կա-
քել չը կոտորիլն դաս կը արուի . կը
ծախուի եւ Պօլոն դալաքիան Մինաս
Երես և Բնկերաց Ամերիկայի մաղադան:

Արադիրս ամեն օր կը հրապարակուի՝
բայց 'ի կիրակի և տօն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Ղաւթիքի մարզում գտնուող Հայաստանի Հանրապետության կենտրոնական հատվածում, Երևանից 70 կմ հեռավորության վրա։

ԿԼԻՐԻՆ. Կարողեա է՞ք. Զաքարեան .
ԵՐԶՆԿԼԻ. Յ. Շաւարչ է՞ք. .
ՍԵՐՍՍՏԻՒ. Նաղարէթ է՞ք. Յ. Իւ-
թամասուհանդ.

ՍՍՍՍՍՍՆ. Եղևարդ. Էֆ. Մուրաթեան
ՌՌՌՌՍՍՐՕ. Արժ. Տ. Արիստակէս ա-
ւագ քահանայ Ֆէսլեան.

ԶՄԻԽԻՆԻՍ, ԳՐԻԳՈՐ ԷՓ: ՄՈՆԵՐԱՆՈՒ
ՆԻԿՈՄԻԴԻԱ, ԽՈՐՈՐԴ » ԷՍԿԻՏԵԱՆ
ՏՐԱՊԵՋՈՆ, Ս. ԼԵՐՈՆԻՄՏԵԱՆ ԷՓԷՆՈՒՐ
ԼԵԿՈՆԻԱ:

ԲԱՐՅԵՐԴ. և ՏԵՐՍԻՄ. Կերական էջ.
Ս. Ղազարեճեան.

ՄՈՒՇ. Յաիր Էֆ. Մերունեան .
ՎԱՆ.

ԲԵՐԻԱ. Սեղրակ » Խարածեան.
ՏԻՐԻԱ. ՆԱԿԵՐՏ. Թողմամ էֆ. Թաշ-
ճեան.

ԵԳԵՍԻԱ. Գէորգ Էֆ. Ոսկերչեան.
ՅՕԳՇԱՆ. Ֆէրհատ յ Ա. Ֆէրհատեան.

ՏՓԹԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս Էփ. Հեթումեան

LIBRARY OF CONGRESS

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՀԱԼԱԹԱ ՆՕՐՕ ԽԱՆ



Հովհաննէս Բ

Գրողի և լեզուի հարաբերությունը

Անդրկոյ աղօթունք ճառարանք և կրօնա-
տան ինչպիսի ևս կառավարական բոլոր
դժբաղանքներ և յարկեր յատուկ
շնորհ ու մատուցարարով ։

Յառկալիս տիկերձեմ, իշխանայրներուն
և մուսուաւարմայ հայրմ չնուած
Դեռ արդարեւ անկէն ։

Սյոյն Գրգորյանանին համբաված աշխարհագրագետ Է. Մինչևև. ցայսօր եղաններուն վընայ օսեն կերպով գեղադրացի լինին անհամար վկայներով և բացակիք ու սրբանուկերով հաստատուած ։

Ճորճ Գրգորի որումս վկայաններէն հետևելով յառաջ կը բերերէր, արդոյ հաւատարմեան դատողութեան թ տրով ։

ДОНУ ИЛИ ЗАДАТЬ

Sto mi buntino

Տէր. — Իս կալուածաներս վերտին հոյ ճարակ եղան և զքաղաքաբ ասաւ,
 ինչպիսիք լինեցաւ իմ օրովս։ Եւ իմ օրովս իմ քաղաքս քան ի նորին օրս
 շատ ավելի բարեկարգ եղաւ։

ԶԻՐ Արկղամուրին ճիշդ քովը ուրիշ մ'ալ կար, որն որ Պ. Բոցին (Coates) գրող էր, որն էլ հարկ էր դնել իր անունը հետոյ։ Այս վերջինին մէջ գտնուած տետրակներն և կարեւոր իմընքս իմ հարկ էր դնել իր անունը հետոյ։ Այս վերջինին մէջ գտնուած տետրակներն և կարեւոր իմընքս իմ հարկ էր դնել իր անունը հետոյ։

Ռոմա տը Եանդյո
8 ապրիլ 1868

(Ստորագրեալ)

Առնելի բնութային տեղեկութեանց և վարչականներու վաւերացման համար,
սովորէ ի դիմել առ ՅՈՒՀԱՆՆԻՍ ԱՐՄԱՆՅԱՆ ԳԼԿԷՆԻԱՆ ԳՐԹԱՐԱՔԻՆ ԴԱՏԱՎՈՐ
ԳՐԹԱՎՈՐԱԿԱՐԱՆՑ ԶԱՇԽԱՏԱՆԻ և ՊՈԼԻՂԵՐԻՅ ՀԱՃԱՐԻ, Առաջառնելի Գ. և կամ առ
Գ. Փ. Ռ. ՅՈՒՀԱՆՆԻՍ, վաճառարան Առաջառնելի Բ.